

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

«30» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ԱՆՈՒՇ ԱՇՈՏԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԱՇԱՆՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԱՎԱՐԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 12-33.6-Մ2-3)  
ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը, ինչպես նաև Արդարադատության նախարարության փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության ընդհանուր բաժնի գլխավոր փաստաթղթավարի (ծածկագիր՝ 12-33.6-Մ2-3) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 29-ի եզրակացությունը և Ա. Մարգարյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Անուշ Աշոտի Մարգարյանին 2020 թվականի հոկտեմբերի 1-ից, 9 ամիս փորձաշրջանով, նշանակել Արդարադատության նախարարության փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության ընդհանուր բաժնի գլխավոր փաստաթղթավարի (ծածկագիր՝ 12-33.6-Մ2-3) պաշտոնում:

2. Փորձաշրջանի ընթացքում Ա. Մարգարյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Արդարադատության նախարարության փաստաթղթաշրջանառության ապահովման վարչության պետ (ծածկագիր՝ 12-33.6-Ղ3-1) Լիլիթ Ալեքսանյանին:

3. Աշխատավարձը սահմանել՝ 212. 309 ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

9/30/2020

X 

Suren Galstyan

Signed by: GALSTYAN SUREN 1111911555

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ